# ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ
# IMEX GROUP Co.LTD

IMEX GROUP Co. LTD

ՀՀ, Երևան - 0052, Թբիլիսյան խճուղի 25
25 Tbilisyan Highway, 0052 - Yerevan, RA
Հեռ./Tel.: (374 10) 28 74 82
Ֆաքս/Fax: (374 10) 28 20 81
E-mail: imex@arminco.com


## ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

## ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

---

**Թողարկողի ֆիրմային անվանումը՝** *«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ*
**Կազմակերպական-իրավական ձևը՝** *սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն*
**Գտնվելու վայրը, հասցեն, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն)՝** *ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 25; հեռախոս՝ (37410) 28-20-69, 28-74-82, 20-71-91; ֆաքս՝ (37410) 28-20-81; ինտերնետային կայքերը՝ www.idealsystem.am, www.ceramica.am; էլ-փոստ՝ imex@arminco.com*
**Հաշվետվության համարն ու ամսաթիվը՝** *N 9, 03 ապրիլի 2009թ.*

---

**Տեղաբաշխված արժեթղթերի դասը՝** *անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս*
**Արժեթղթերի քանակը՝** *100,000 (հարյուր հազար) հատ*
**Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝** *10,000 (տասը հազար) ՀՀ դրամ*

***«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:***

Ստորագրող անձինք՝

| | | | |
|---|---|---|---|
| **Ռաֆայել Մանուչարյան**<br>(անուն, ազգանուն) | **Տնօրեն**<br>(պաշտոն) | ____________<br>(ստորագրություն) | **03.04.2009թ.**<br>(ամսաթիվ) |
| **Սամվել Եղիկյան**<br>(անուն, ազգանուն) | **Գլխավոր հաշվապահ**<br>(պաշտոն) | ____________<br>(ստորագրություն) | **03.04.2009թ.**<br>(ամսաթիվ) |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| | | | |
|---|---|---|---|
| **Ռաֆայել Մանուչարյան**<br>(անուն, ազգանուն) | **Տնօրեն**<br>(պաշտոն) | ____________<br>(ստորագրություն) | **03.04.2009թ.**<br>(ամսաթիվ) |

Կ.Տ.

## «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

# ԱԶԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ

«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ԱՄԵՐԻԱ ԲԱՆԿ» ՓԲԸ միջև 2009թ ապրիլի 2-ին կնքվել է բրոքերային ծառայությունների մատուցման թիվ 024 պայմանագիր, որով բանկը պարտավորվում է վճարի դիմաց կարգավորվող շուկաներում կամ դրանցից դուրս մատուցել ֆինանսական,այդ թվում` ածանցյալների և ռեպո գործարքների շուկայում բրոքերային ծառայություններ:

Միաժամանակ, վերը նշված կողմերի միջև կնքվել է 2009թ ապրիլի 2-ին պահառության ծառայությունների մատուցման պայմանագիր, որով բանկը «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ համար արժեթղթերի հաշիվը բացելու, այն սպասարկելու, այդ հաշվով գործառնությունների իրականացման միջոցով մատուցում է.

- արժեթղթերի նկատմամբ գույքային իրավունքների հաշվառման ծառայություններ
- արժեթղթերի ձեռք բերման և օտարման հետ կապված ծառայություններ
- Կենտրոնական դեպոզիտարիայում հանդես գալու հետ կապված ծառայություններ
- արժեթղթերից բխող իրավունքների իրականացման հետ կապված ծառայություններ

Վերը նշված երկու պայմանագրերի շրջանակներում 2009թ ապրիլի 2-ին թիվ 148 պատվերի համաձայն «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 2009թ ապրիլի 3-ին պատվիրել է «ԱՄԵՐԻԱ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին կատարել «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից թողարկված քանակությամբ 6800 պարտատոմսերի բրոքերային առք 70 000 000 դրամ արժեքով:

| **Ռաֆայել Մանուչարյան** | **Տնօրեն** | ___________ | 03.04.2009թ. |
|---|---|---|---|
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

Կ.Տ.